

Իմամ Խոմեյնիի գաղափարական ազդեցությունը

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահների

իրականացրած քաղաքականության վրա

Իրանում Իսլամական հեղափոխությունը դարձել է համաշխարհային պատմության աննախադեպ և շրջադարձային իրադարձություններից մեկը: Իսլամական հեղափոխության հաղթանակով Իրանում հաստատվեց առաջին կրոնապետությունը՝ ծնունդ առավ Իրանի Իսլամական Հանրապետությունը և Իրանի ժողովրդի համար նոր տարեգրություն սկսվեց: 1979թ. հեղափոխության հաղթանակը կարելի է մեկնաբանել իսլամի բնույթով, որին ծնունդ տվեց և նոր շունչ հաղորդեց ականավոր շիա հոգևորական իմամ Խոմեյնին: Ջարգացնելով և իրականություն դարձնելով հեղափոխական նախագիծը, որի հիմքում ընկած էին իսլամական ուսմունքները՝ իմամ Խոմեյնին վերափոխման ենթարկեց նաև իսլամի շիայական կրոնական ուղղությունը, և տարածաշրջանային ու միջազգային մակարդակում իսլամի քաղաքական, հոգևոր և մտավոր վերածննդի նախասկիզբ դրեց:

Իմամ Խոմեյնիի մահվանից հետո նրա գաղափարները, Իսլամական հեղափոխության արտահանման քաղաքականությունն ու Իրանի Իսլամական Հանրապետության զարգացման ծրագրերը շարունակեցին և մինչ օրս էլ կյանքի են կոչում ԻԻՀ հոգևոր առաջնորդն ու նախագահները: Այսօր Խոմեյնիի ուսմունքները կազմում են պետական համակարգի հիմքը, որը միավորում է իսլամական աստվածապետության և ժողովրդավարության էլեմենտները:

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո նորաստեղծ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ ընտրվեց Աբուլհասան Բանիսադրը, ով 1979թ. իմամ Խոմեյնիի հետ վերադարձել էր Թեհրան և ընդգրկվել Իսլամական հեղափոխական խորհրդում: Վերջինս Հեղափոխության ընթացքում հանդիսանում էր իմամ Խոմեյնիի գաղափարակիցը և աջակցություն էր ցուցաբերում շահական վարչակարգի դեմ պայքարում, սակայն Իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում չկարողանալով ճիշտ դեկավարել ուժերը՝ պաշտոնանկ արվեց:

Աբուլհասան Բանիսադրին հաջորդել է Մոհամադ Ալի Ռաջային, ով, սակայն, չափազանց կարճ ժամանակահատված է պաշտոնավարել է:

ԻԻՀ թվով 3-րդ նախագահ, իսկ այժմ նաև Հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին եղել է Իսլամական Հեղափոխության առանցքային դեմքերից մեկը: Ինչպես իմամ Խոմենին, Ալի Խամենեին ևս վստահ էր, որ Իսլամական վերածննդի հիմնական աղբյուր են ծառայում Իսլամն ու մուսուլմանների սուրբ գիրքը՝ Ղուրանը: Այս սկզբունքից ելնելով, անհրաժեշտ է մարդկանց կենսագործունեության կենտրոն դարձնել իսլամն ու շարիաթը: Իմամ Խոմենիի գաղափարների ազդեցության ներքո Ալի Խամենեին կոչ էր անում վերադառնալ անաղարտ Իսլամին՝ հրաժարվելով հակաիսլամական բարքերից և ապրելակերպից¹:

Իմամ Խոմենիի գաղափարակիրներից, հետևորդներից և մտերիմ աջակիցներից էր Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին, ում կրոնա-քաղաքական գործունեության հիմքը կազմել են իմամ Խոմենիի գաղափարներն ու հայեցակարգերը: Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին մեծ դեր է ունեցել Իսլամական հեղափոխության հաղթանակին հաջորդած առաջին տասնամյակում Իրանի ճգնաժամերի հաղթահարման գործում: Իր նախագահության տարիներին Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին ձեռնամուխ եղավ երկրի ներսում սոցիալ-քաղաքական բարեփոխումների իրականացմանը²:

Հ. Ռաֆսանջանիի սոցիալ-քաղաքական բարեփոխումները փորձեց շարունակել ԻԻՀ հաջորդ Մոհամադ Խաթամին, ով հավատարիմ մնալով <<կեղեքիչների>> և <<հալածյալների>> միջև աշխարհի բաժանման խոմենիական սկզբունքին, ինչպես նաև Արևելք-Արևմուտք հակադրության ազդեցության ներքո երկրում փորձեց վերահոսկողություն սահմանել արևմտյան մշակույթին առնչվող յուրաքանչյուր դրսևորման՝ երաժշտության, կինոյի, գրքերի և այլնի նկատմամբ³:

¹ Баранов А. В., Концепция <<Исламского пробуждения>> Аятоллы Али Хаменеи, <https://cyberleninka.ru/article/v/kontseptsiya-islamskogo-probuzhdeniya-ayatolly-ali-hamenei>

² Роль аятоллы Хашеми Рафсанджани в урегулировании кризисов Ирана, <http://parstoday.com/ru/radio/iran-i57703>

³ Капитонов К., Мохаммад Хатами, <http://www.peoples.ru/state/king/iran/khatami/>

Իրանի Իսլամական Հանրապետության թվով 6-րդ նախագահ Մ. Ահմադինեժադը, ինչպես և իմամ Խոմեյնին հավատում էր, որ մարդկությանն իրար կապող թեման միաստվածության գաղափարն է և Պարսից ծոցը հարուստների ու աղքատների բաժանելով, մարտահրավեր նետելով ԱՄՆ-ին և Իսրայելին՝ ստացավ ժողովրդի և հոգևոր վերնախավի աջակցությունը:

Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո Իրանի արտաքին քաղաքականության գաղափարական հիմքը հանդիսանում է «Խոմեյնիի շիական պանիսլամիզմը (նեոշիիզմ)»։ Այս հայեցակարգի քաղաքական բովանդակությունը «Իրանի էգիդոյի ներքո Համաշխարհային իսլամական համայնքի ստեղծման ձգտումն է՝ Իսլամական հեղափոխության արտահանման միջոցով»։ Սակայն Իրանում տարբեր կարծիքներ կային «հեղափոխության արտահանման» մեթոդների վերաբերյալ։ Պետական հիմնարկները և նախնառաջ ԱԳՆ-ն, կողմնակից էին «մեղմ ուժի» կիրառմանը, իսկ «Իսլամական հեղափոխության պահապանների խորհուրդ»-ը (ԻՀՊԽ) կողմնակից էր հեղափոխության արտահանման կոշտ մեթոդներին։ Պատահական չէ, որ նորանշանակ նախագահ Մ. Ահմադինեժադի կաբինետում մեծ թիվ էին կազմում հենց Հեղափոխության պահակախմբի կորպուսի անդամները, քանզի Մ. Ահմադինեժադը ևս իր արտաքին քաղաքականության մեջ հանդես էր գալիս կոշտ դիրքորոշումներով:

Նեոշիիզմի քաղաքականության հիմքը կազմել են և մինչ օրս կազմում են մի քանի հայեցակարգեր և դրույթներ՝

1. Իսլամական միջազգայնականության և բոլոր մուսուլմանների միասնության հայեցակարգ,
2. Մուսուլմանների հատուկ առաքելության, իսլամի դերի և Իրանի Իսլամական Հանրապետության մասին հայեցակարգ,
3. Իսլամական հեղափոխության բնույթի և այլ երկրներ նրա արտահանման տեսություն,

4. <<Հալածյալների (խոցելի) և կեղեքիչների (ամբարտավանների)>> միջև բաժանում և նաև առանցքով աշխարհի բաժանումը <<Հյուսիս-հարավ>>-ի⁴:

Իսլամական հեղափոխության հետևորդներից էր ԻԻՀ գործող նախագահ Հասան Ռոհանին, ով իմամ Խոմեյնիի նման դեմ գնալով զինված պայքարին՝ մշտապես ընդգծում է մշակութային ու ժողովրդական պայքարի անհրաժեշտությունը⁵:

Խոմեյնու <<Ո՛չ Արևմուտք, ո՛չ Արևելք>> հայտնի, դասական դարձած թեզը, որը հետազոտողների կողմից առավելապես դիտվում և ներկայացվում է որպես Խոմեյնու ներքին և արտաքին քաղաքականության հիմնական հայեցակարգ, դրված է Իսլամական պետական կառավարման կառուցվածքի հիմքում. սա իսլամական աշխարհի հակադրումն է ոչ իսլամական աշխարհին և այստեղից՝ իսլամական աշխարհի մեկուսացման միտումը, որը, լինելով <<Ո՛չ Արևմուտք, ո՛չ Արևելք>> արմատական թեզի արտահայտություններից մեկը՝ առավել ամբողջական դրսևորվում և նյութականանում է <<Իսլամական համերաշխության>> գաղափարախոսության մեջ: Միակ Աստծո՝ Ալլահի և նրա առաքյալ Մոհամմեդի ճանաչումը հիմք է հանդիսանում ոչ միայն բոլոր ժամանակների հավասարության և մահմեդական համայնքի միասնականության, այլև ոչ մահմեդական աշխարհին այդ համայնքի շահերի հակադրության համար⁶:

Սրանց անմիջական ազդեցության ներքո կրոնական ուժերը շեշտում էին այն, որ Իսրայելը անօրինական պետություն է՝ կառուցված գողացված մուսուլմանական հողերի վրա: Ինչպես նաև Խոմեյնին հստակ տարբերություն էր դնում հրեաների և սիոնիստների միջև: Հուդայականությունը, ինչպես նաև քրիստոնեությունը, համարվելով միաստվածային կրոններ, Իրանում հանդուրժողական վերաբերմունք էին գտնում, մինչդեռ սիոնիզմն անընդունելի և պիղծ է համարվում⁷:

⁴ Баутин А.А. Политика экспорта иранской исламской революции, <http://vostokoved.ucoz.ru>

⁵ Ռոհանի. «Հոգեվրյա Իմամ Խոմեյնին ազատության ու անկախության ուղին էր», <http://parstoday.com/hy/news/iran-i52791>

⁶ Ստամբուլցյան Ա. Գ., Խոմեյնու արտաքին քաղաքական կոնցեպցիաները, Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ և հիմնադիր Իմամ Խոմեյնու մտքերի և հայացքների քննարկմանը նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա, 1 հոկտեմբեր, 1999, էջ 74-78

⁷ Hunter Sh., Iran and the World: Continuity in a Revolutionary Decade, Bloomington: Indiana University Press, 1990, p. 36-37

Ըստ էության Իմամ Խոմեյնիի գաղափարներն ու իսլամական սկզբունքները Իսլամական Հանրապետության նախագահները ընկալում էին որպես ուղեցույց, որը պետք է կյանքի կոչվեր. մասնավորապես՝

- Հավատարմություն «Իսլամական արդարության» իդեալին,
- Հավատարմություն «Նահատակության» գաղափարին,
- Հավատարմություն Իսլամի և Արևմուտքի միջև գոյություն ունեցող պայքարին⁸:

Փաստորեն, Իրանի Իսլամական Հանրապետության յոթ նախագահները աչքի էին ընկնում նվիրվածությամբ իսլամական արդարությանը, ինչը ամփոփված էր իմամ Խոմեյնիի՝ Իսլամական հեղափոխության գաղափարախոսության իրականացման նկատմամբ նրանց նվիրվածությամբ և հանձնառությամբ: Պատահական չէ, որ նախագահների ելույթներում մեծ դեր էին խաղում ազգայնականությանն առնչվող հայտարարությունները, երկիրը տարածաշրջանային գերտերության վերածելու ձգտումները, Պաղեստինյան հիմնախնդիրը, հակաարևմտյան դիրքորոշումները և այլն: Այսպիսով, կարելի է ասել, որ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահները հոգեպես, գաղափարապես, ներքին և արտաքին քաղաքականության մեջ իրենց սկզբունքներով հանդիսանում են խոմեյնիական ուսմունքների կրողներն ու հետևորդները:

⁸ Savyon A., The 'Second Islamic Revolution' in Iran: Power Struggle at the Top, <https://www.memri.org/reports/%E2%80%98second-islamic-revolution%E2%80%99-iran-power-struggle-top>, (17. 11. 2005)